Բամից ստեղծաւղն ամենայնին
Արժան առնէ իւր հանդըստին
Յուսացելոցս որ ի նա դիմին
Ի յաւրն ահեղ հրապարակին:

---

## 8.

## ՏԱՂ ՈՂՈՐՄՈՒԿ

Զառածեալ մեղօք եղկելի,
Թշուառացեալ մարմնով եմ գերի,
Մի՛ լինիր անյոյս եւ թերի.
Սիրտ իմ, ընդէ՞ր տրտում ես,
Ուրախ լե՛ր, ընդէ՞ր տրտում ես:

Աստուածածին սուրբ կոյս է,
Մեղաւորաց դարձ եւ յոյս է,
Ապագայից եւ այժմոյս է.
Սիրտ իմ, ընդէ՞ր տրտում ես,
Ուրախ լե՛ր, ընդէ՞ր տրտում ես:

Քաջալերեաց սիրտ եւ խընդա,
Ուրախ լեր անձն իմ եւ ցընծա,
Զուարճացիր դու՛ եւ բերկրեա՛.

---

59. A. ամենայնի. C. ամենի: — 61. C. յուսացելոց: — 62. B. ի յոր C. ի յաւուրն:

---

8. Բնագիր առնուած է Թ. 160, Թղ. 189ա. համեմատուած է Թ. 436, ԻԱ. Թղ. 42բ (= B) ձեռագրին եւ Տ. Վ. Պալեանի (Բիւրակն, 1897, էջ 738—739) հրատարակութեան (= C) հետ: Հմմտ. Հանդ. Ամս. 285:

Խորագիրն այսպէս ունին AC. իսկ B. Տաղ անուշ:

2. B. զայրացեալ: — 2. B. Թշվառական: չէ+ եմ: — 5. 10, 15, 20 BC. սիրտ իմ վասն ընդէ՞ր: — 7. Bի մէջ է իբրեւ չորրորդ տուն: — 9. B. ապագային:

12. Bի մէջ է իբրեւ երրորդ տուն: — 12. B. քաջալերեայ, խընդայ:

13. A. հոգի իմ: B. ցընծայ: — 14. B. բերկրեայ: